

## ՀԱՅՈՑ ՏԱՆԹԷԱԿԱՆԸ (Գլուխ Քսաներորդ)

- 9.- Ես դեգերում եմ դժոխք. որ չմոռանաք  
Ահեղ եղեռնի լաբիրինդները Լեթային չտաք.  
Վրէժի թուրը պատեան չդնէք երբեւէ՝ քանզի  
Հայոց թրերի միակ պատեանը ձինն է Մասիսի.  
Միակ պատեանը հայոց թրերի՝ Վանայ ծովն է ծով,  
Որ դեռ կը սպասէ Յիսուսուդ դարձով.  
Քանզի իմ ներկան՝ այր է մի յուսհատ,  
Հայաստանիկըս վրէժն է կիսատ ...

Գրչիս աչքերից արին-արցունք է եղեռնը քսմում.  
Ե՛ւ լալկան եմ ես, ե՛ւ մոնչում եմ, ե՛ւ հով, ե՛ւ ցասում.  
Ե՛ւ մեղմիկ հով եմ, ե՛ւ ահեղ սասում, հայոց պատմութեամբ.  
Ե՛ւ աղօթող եմ, ե՛ւ թէ անաստուած, ե՛ւ պարզ եմ, ե՛ւ ամպ.  
Խօլ մի դառնակերտ՝ ես քսաներորդ դարով եմ հաստուած,  
Քանզի դարն ինքը ե՛ւ սատանայ էր. ե՛ւ մի կիսաստուած.  
Իմ մարմնախրճիթն հաստուած է կառվ աստուածամարմնի.  
Դառնացաւ կալըս այս դառնադարում ամենադժնի,  
Ուր եօթը միլիոն եւ դեռ աւելի հայերըս կորան,  
Եւ դեռ բանտում է մի մեծ Հայաստան ...  
Իսկ ժողովրդին փնտռէք անբնակ անապատներում.  
Մէջ Միջագետքի գանգաբուրդերում,  
Կիրճ ու ձորերի անմարդ խորքերում.  
Թէ վիշտըս մղեմ մեծ Մասիսի մէջ  
Մասիսն հրաբուխ կը ժայթքի անշէջ,  
Եւ կը կործանէ աշխարհն այս անսուգ,  
Աշխարհն, որ ծով է մի մեղսամասունք,  
Ուր եաթաղանուած սեւ լեզուն հանում.  
Սեւ եղեռնագործ Թալեաթն այսպէս էր լալիր չարծենում.  
- Ե՛ս հազարերորդ զարմըս Մահմեդի.  
Հայեր ջնջելով ես հասայ ելայ գահն Արարատի.  
Այդ ե՛ս եմ անսիրտ. այդ ե՛ս եմ անխիղճ. այդ ե՛ս եմ պիղծը,  
Երբ կատարեցի Մահմեդի՝ դարեր ուխտըւած իղձը.  
Ես կշտացուցի հայ մանկանց մտով ձկներին՝ ծովում.  
Ես կշտացուցի թեւատրներին՝ երկնքի մովում.  
Հայ մանկանց ուղեղ կերցըրի նրանց թխսաձագերին.  
Հայ միս ու ոսկրով ես հագցըրի օձ ու վագրերին.  
Քանզի նրանց էլ հայ մտով էի ես կերակրում.  
Ես կշտացուցի հայ կանանց կրծքով ձագերն առիծի.  
Գայլին գլավորի միս ու ոսկըրով ես կշտացուցի.

Չկայ անապատ. ուր կարիճները հայ միս չկերան,  
 Էլ սով չեն տեսնի վայրի վագրերը հազարաքերան ...  
 - Իմ ի՞նչն է անգութ, երբ անտառներում, լեռների վրայ  
 ես կշտացուցի խեղճ գազաններին՝ եղեռնով հերուայ,  
 երբ ագռաւները իրենց դարատը քաղցը մոռացել՝  
 Դիերի վրայ ձագն էր յափրացել, անգըղ էր դարձել ...  
 Եւ մինչեւ օրըս փարախից գայլերն էլ գառ չեն տանում,  
 Քանզի հայութեան միս ու ոսկրով են դեռ յագենում.  
 Ոչ ոք չէր խղճում գայլին, բորենուն, ձկանն, անգըղին.  
 Ցեղեր փրկեցի սովից՝ մահ տալով միայն հայ ցեղին.  
 Թող մարդիկ անմիտ նզովեն դեռ ինձ, ես չեմ մարդակեր.  
 Իմ կշտացուցած գայլն ու բորենին ինձ կ'օրհնեն դարեր.  
 Եօթն հարիւր հազար չախկալ կշտացաւ միայն Դեր-Ջօրում.  
 Հայոց տեղ հիմա գայլերը ծով են հայոց լեռներում.  
 Հայկական հարցը ջնջովեց, չքացաւ երկրի երեսից.  
 Մի հայ չմնաց, որ վըրաս թքէր իր անյոյս հերսից:  
 Ողջ արեւելքի գազաններն հայոց մտով կշտացան  
 Պէս-Պէս ձեւերով ցեղասպանութեան,  
 Եօթը միլիոնից վերջին մի երկու հայ եմ բաց թողել  
 Այն էլ՝ կորստեան ծովերն են փախել ...  
 Իսկ վերջին հային, որ Արարատի վրայ է թաղուած,  
 Կը հրամայեմ իր գոռից հանեն,  
 Մինչեւ Դեր-Ջօրի դժոխքը տանեն,  
 Այնտեղ ձորէ-ձոր դժոխքը տանեն,  
 Որ մեռեալն անգամ Մասիս չը յիշէ՝ զարթնի հրաշքից ...  
 - Այսպէս էր հաջում խրախճանելով Մասիսի հովտում.  
 Դժոխքի գայլը՝ Թալեաթը՝ ինքն էլ հայեր էր ուտում ...  
 Թէ ցաւըս դնեմ մեծ Մասիսի մէջ՝  
 Մասիսն հրաբուխ կը ժայթքի անշէջ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ